

Հայտ Ներկայացնելու Հրավեր
Երկիրը՝ Հայաստանի Հանրապետություն
Ծրագրի անվանումը՝ «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և
մրցունակության երկրորդ ծրագիր»
ՎՋՄՔ փոխառության No.՝ 8374-AM, ՄՁԱ վարկ՝ No. 5504-AM ' No. 5505-AM
Պայմանագրի անվանումը՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Հայրավանք համայնքի
արոտավայրերում ջրարբիացման ցանցի կառուցում»
ՀՆՀ No.՝ NCB-CARMAC2-CP-16-G-9/02 (Hayravank CW)

1. Հայաստանի Հանրապետությունը ֆինանսավորում է ստացել ՀԲ-ից՝ «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագրի» ծախսերը հոգալու նպատակով և մտադիր է այդ միջոցների մի մասն օգտագործել «ՀՀ Գեղարքունիքի մարզի Հայրավանք համայնքի արոտավայրերում ջրարբիացման ցանցի կառուցում» No. NCB-CARMAC2-CP-16-G-9/02 (Hayravank CW) պայմանագրի շրջանակներում վճարումներ կատարելու համար:
2. ՀՀ ՊՆ «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը («ԳԾԻԳ» ՊՊ) հրավիրում է մրցույթի իրավասու մասնակիցներին փակ Հայտեր ներկայացնել հետևյալ շինարարական աշխատանքներն իրականացնելու համար՝
 - ա. Ջրարբիացման ջրագծի կառուցում:
 - բ. Ջրագծի վրա երկու խմոցների տեղադրում:
 - գ. Պոմպակայանի կառուցում:

Աշխատանքների նախատեսված տ'ողությունն է 2016թ. հուլիսից սկսած ութ (8) ամիս: Պայմանագիրը կարող է կասեցվել վատ եղանակային պայմանների պատճառով՝ պայմանագրի ավարտման ժամկետը երկարաձգելու պայմանով:

Շինարարական հրապարակը գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Հայրավանք գյուղի համայնքային հողերի տարածքներում՝ գյուղի ամառային արոտավայրերի և խոտհարքի տարածքում:

Հիմնական որակավորման չափանիշներն են.

- Միջին տարեկան շրջանառությունը շինարարության գծով պետք է կազմի 325,000,000 ՀՀ դրամ հաշվարկված որպես վերջին 3 (երեք) տարիների ժամանակահատվածում շարունակվող և/կամ ավարտված պայմանագրերով ստացված վճարումների ընդհանուր գումար, բաժանած 3-ի:
- Մրցույթի մասնակիցը պետք է ցույց տա, որ նա կարող է ստանալ, կամ նրա համար մատչելի են իրացվելի ակտիվներ, չգրավադրված անշարժ գույք, վարկային գծեր կամ այլ ֆինանսական միջոցներ (սակայն ոչ որևէ պայմանագրով ստացված կանխավճար), որոնք բավարար են շինարարության ընթացքում կանխիկ դրամի հետևյալ հոսքերն ապահովելու համար. 20,000,000 ՀՀ դրամ՝ հանած մրցույթի մասնակցի այլ պարտավորությունները:
 - գ. 2011թ. հունվարի 01-ից մինչև Հայտի ներկայացման վերջնաժամկետն ընկած ժամանակահատվածում, մասնակցություն որպես գլխավոր կապալառու, համատեղ ձեռնարկության անդամ, կառավարման կապալառու կամ ենթակապալառու՝ գոհացուցիչ կերպով և էապես ավարտված առնվազն 2 (երկու) պայմանագիր յուրաքանչյուրը առնվազն 85,000,000 ՀՀ դրամ արժեքով՝ ջրարարբիացման աշխատանքների:
 - գ. Վերոհիշյալ կամ այլ ավարտված պայմանագրերում, կամ այլ իրականացվող պայմանագրերում, 2011թ. հունվարի 01-ից մինչև Հայտի ներկայացման վերջնաժամկետն ընկած ժամանակահատվածում՝ մասնակցություն որպես գլխավոր կապալառու, համատեղ ձեռնարկության անդամ, կառավարման կապալառու կամ ենթակապալառու, հետևյալ հիմնական աշխատանքների նվազագույն ծավալի հաջող ավարտման փորձով. հողային աշխատանքներ տարբեր հողային կատեգորիաների՝ ընդամենը 7,000 մ.խոր. (վերը նշված ժամանակահատվածի որևէ մեկ տարվա ընթացքում): Պահանջվող հիմնական աշխատանքների ծավալը կարող է ցույց տրվել մեկ կամ մի քանի պայմանագրեր միավորելու միջոցով (առավելագույնը երեք պայմանագիր), եթե դրանք իրականացվել են նույն ժամանակահատվածում:
- 3. Մրցույթն անց է կացվելու Ազգային մրցութային հայտարքի (ԱՄՀ) ընթացակարգի համաձայն, որը սահմանված է Համաշխարհային Բանկի ուղեցույցներում՝ «Ապրանքների, աշխատանքների, և ոչ-խորհրդատվական ծառայությունների գնում վՋՄՔ-ի փոխառությունների և ՄՁԸ-ի վարկերի ու դրամաշնորհների շրջանակներում Համաշխարհային բանկի փոխառությունների կողմից» (2011թ. հունվար, վերանայված՝ 2014թ. հուլիսին): Մրցույթը բաց է մրցութային փաստաթղթերով սահմանված բոլոր իրավասու մասնակիցների համար: Ի լրումն, խնդրում ենք ուշադրություն դարձնել 1.6 և 1.7 կետերի վրա, որով սահմանվում են Համաշխարհային բանկի քաղաքականությունը շահերի բախման մասով:
- 4. Մրցույթի շահագրգիռ իրավասու մասնակիցները կարող են լրացուցիչ տեղեկություններ ստանալ «ԳԾԻԳ» ՊՊ-ից (պրն. Ազատ Թովմասյան՝ գնումների գլխավոր մասնագետ, հեռ. +374 (10) 29 73 01, էլ.փոստ՝ atovmasyan@arspiu.com) և ուսումնասիրել մրցութային փաստաթղթերը ներքո նշյալ հասցեով՝ աշխատանքային օրերին ժամը 10:00-ից մինչև՝ 17:00 (երկուշաբթի օրվանից մինչև՝ ուրբաթ):
- 5. Շահագրգիռ մասնակիցները կարող են ձեռք բերել մրցութային փաստաթղթերի ամբողջական փաթեթը հայերեն լեզվով, ներկայացնելով գրավոր դիմում ներքոհիշյալ հասցեով և վճարելով 20,000 ՀՀ դրամ չհատուցվող գումար: Նշված գումարի վճարման եղանակն է բանկային փոխանցումը հետևյալ հաշվին.

Շահառու. ՀՀ ֆինանսների նախարարություն/կենտրոնական գանձապետարան
Հաշվի համար. 900000915042 (ՀՀ դրամ)

Մրցութային փաստաթղթերի ամբողջական փաթեթը կարող է անվճար բեռնվել նաև www.gnumner.am
և www.arspiu.com կայքերում: Այնուամենայնիվ «ԳԾԻԳ» ՊՀ-ն պատասխանատու չէ վերոնշյալ
կայքերից սխալ կամ ոչ ամբողջական բեռնման, ինչպես նաև հետագայում մրցութային փաստաթղթերի
փոփոխությունների առկայության դեպքում դրանց բացթողման համար:

6. Հայտերը պետք է ներկայացվեն ստորև նշված հասցեով 2016թ. հունիսի 07-ին ժամը 16:00-ին
(Երևանի ժամանակով) կամ ավելի վաղ: Էլեկտրոնային եղանակով Հայտերի ներկայացում չի
թույլատրվում: Ուշացված Հայտերը կմերժվեն: Հայտերը կբացվեն բացմանը մասնակցելու ցանկություն
ունեցող մասնակիցների ներկայացուցիչների ներկայությամբ 2016թ. հունիսի 07-ին ժամը 16:05-ին
(Երևանի ժամանակով) ներքո նշված հասցեում:

7. Հայտերը պետք է ուղեկցվեն Հայտի երաշխիքով, որի գումարն է՝ 2,200,000 ՀՀ դրամ:

8. Վերևում հիշատակվող հասցեն է.

ՀՀ ԳՆ «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ

Պրն. Գագիկ Խաչատրյան, տնօրեն

Պրն. Ազատ Թովմասյան, գնումների գլխավոր մասնագետ

Հասցե՝ ՀՀ, 0014, Եր'ան, Կոմիտաս 54/բ

Հեռախոս՝ +374 (10) 29 73 01, +374 (10) 29 73 02, +374 (10) 29 73 03;

Ֆաքս՝ +374 (10) 29 73 08

Էլ.հասցե՝ info@arspiu.com

Web site: www.arspiu.com